ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ
LILIT HAKOBYAN

ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ Կ. ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

13–րդ դարի հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկը մշակված ու կանոնավոր ձևերի բազմազանությամբ կայուն տեղ է գրավում միջին հայերենի որպես հայոց լեզվի որակական զարգացման մի առանձին փուլի բառապաշարի ու քերականության ուսումնասիրության մեջ:

Նշված ստեղծագործությունը բաղկացած է 2 մասից և ժամանակի հասարակական զանազան բնագավառներ արտացոլելուց զատ բացառիկ արժեք ու կարևորություն ունի նաև լեզվական տեսանկյունից:

Սույն հոդվածում, հիմնվելով Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկի ընձեռած փաստերի վրա, ընդհանուր գծերով ներկայացվում են միջին հայերենի դերբայները, դրանց դրսևորած իմաստները, կազմությունն ու կիրառական առանձնահատկությունները:

Ի տարբերություն գրաբարի, որտեղ դերբայները չորսն են՝ անորոշ, ներկա, անցյալ, ապառնի, միջին հայերենում տարբերակում են վեց դերբայ՝ անորոշ, ենթակայական, ապառնի, վաղակատար, հարակատար և ժխտական:

Անորոշ դերբայը կազմվում է –ալ, –ել, –իլ, –ուլ, –ոլ վերջավորություններով, որոնք ավելանում են ներկայի հիմքին: Գրաբարում Ո խոնարհիչը հանդես է գալիս միայն գոլ պակասավոր բայի մեջ: Դասական գրաբարը չունի նաև –իլ վերջավորությամբ անորոշ դերբայի ձև: Նշենք, որ դասական գրաբարում ի լծորդության բայերը անորոշ դերբայում հանդես էին գալիս ե լծորդով: Ի խոնարհման բայերի ի լծորդը երևան էր գալիս սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության ժամանակ: Հետևաբար դասական գրաբարի շրջանում անորոշ դերբայը կազմվում է –ալ, –ել, –ուլ վերջավորություններով: Միջին հայերենը պահպանել է գրաբարի անորոշ դերբայը նույն վերջավորություններով: Սակայն միջին հայերենում միտում կար գրաբարյան ի լծորդության բայերն արտահայտել –իլ վերջավորությամբ: Այդ միտումը նկատվում է նաև Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում: Այստեղ վկայված են –իլ վերջավորությամբ անորոշ դերբայի բազմաթիվ օրինակներ: Այսպես՝ **ողողանիլ** (59), **սրբիլ**

(59), **կեղծատրիլ** (351), **անկանիլ** (355), **լինիլ** (319) [1]:

Չնայած դրան՝ միջին հայերենում չհստակեցվեց ի լծորդության բայերի՝ ի խոնարհիչով հանդես գալը: Հեգվի որակական զարգացման այս փուլում նշված բայերը զուգահեռաբար հանդես են գալիս –իլ և –ել մասնիկներով: Գանձակեցու երկում գործածվում են նույնիսկ նույն բայի զուգաձևերը –իլ և –ել վերջավորություններով ձևերը: Օրինակներ՝ մեռանիլ (232)-մեռանել (356), նստիլ (94) – նստել (256), հանդիպիլ (256)– հանդիպել (338), ապստամբիլ (265) – ապստամբել (23):

Մյուս լծորդությունների դեպքում անորոշ դերբայի կազմության ձևերը հստակեցված են, ինչպես՝ մարմնանալ (124), թանձրանալ (124), որսալ (102) (ա խոնարհում), ելանել (124), հանել (248), դարձուցանել (263) (ե խոնարհում), ընկենուլ (32), թողուլ (84), ընթեռնուլ (249) (ու խոնարհում):

Գրաբարի նման միջին հայերենում ևս անորոշ դերբայը ենթարկվում է Ո պարզ հոլովման և հոլովվում է միայն եզակի թվով: Այս դերբայը նախադասության մեջ կարող է հանդես գալ շարահյուսական տարբեր պաշտոններով՝ ենթակա, խնդիր, պարագա և այլն:

Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված են անորոշ դերբայի տարբեր հոլովաձևերով օրինակներ, որոնք կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Զկամաւ **տալն** զանձինս ի կապանս արքունի նախարարացն հայոց վասն յուսոյն, որ ի Քրիստոս, ստուգութեամբ ցուցանէ այրն սքանչելի (7): Ոչ տային թոյլ ուստեք **ելանել** արտաքս ի պէտս կարեաց մարմնոյ (248): Իսկ նոքա՝ քանզի արք կանացիք էին, **ուտելոյ** և **ըմպելոյ**, և արբեցութեան պարապեալ, յուսալով յամրութիւն պարապացն, և ոչ յաստուած (253): Արդ ի **բառնալոյ** թագաւորութեան Արշակունեաց մինչև ցթագաւորութիւնն Բագրատունեաց լինին ամք չորս հարիւր երեսուն և չորս (80): **Ակնարկելով** և ազդեցութեան հոգտյն, որ կարողն է **իմաստնացուցանել** զոգէտս և **բանաւոր առնել** զանբանս (4):

Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում մեծ թիվ են կազմում ի նախդիր+անորոշ դերբայ կաղապարով կառույցները: Վերջիններս ժամանակի իմաստ են արտահայտում: Ներկայացնենք այդ օրինակներից մի քանիսը: Եւ սուրն **ի մեռանելն** իւրում կոչեաց զհօտն իւր և օրհնեաց զնոսա (22): **Ի** զալ զարքանայն ի հրամանէ աստուծոյ երկիրն բուսոյց ինքնեակս (262): Արդ **ի սկսանել** ՈՂԱ թուականին հայոց, զայր հասանէր հրովարտակ ի խաղանէն առ զօրս և զօրագլուխս (278):

---

[1] Փակագծերի մեջ առնված թվերը նշում են Կ. Գանձակեցու, Պատմութիւն հայոցն երկի էջերը (Երևան, 1961):

Անորոշ դերբայը հաճախ գործածվում է եղանակիչ բայերի հետ՝ եղանակիչ բայ+անորոշ դերբայ կաղապարով։ Օրինակներ՝ Միայն մաքուր հոգով **պարտ է սպասատրել** աստուածային խորհրդոյն (139)։ **Պարտ էր ասել**, թէ բանն աստուած երէկ, և Յիսուս Քրիստոսն այսօր (141)։ Գրեալ է, որ առնէք և պարտ է առնելն, և արարէք ստուգիւ (309)։

Անորոշ դերբայը մասնակցում է բայական բաղադրյալ ստորոգյալի կազմությանը։ Այսպես՝ Եւ ընտրեալ ի մէնջ արս, որք **կարող էին շրջիլ** ընդ նուսա (248)։ Զփուշս անգամ **ոչ կարէին հանել** յոտիցն (248)։ **Ոչ կարեմ** ընդ գրով **արկանել** զամենայն նեղութիւնսն, որ անցին ընդ մեզ (249)։ **Կարող է** աստուած **ապրեցուցանել** զմեզ ի հրոյս (355)։

Ներկա դերբայը գրաբարում կազմվում է **–ող** //օղ<աւղ վերջավորությամբ։ Զուգահեռաբար գործածվում են նաև **–իչ** վերջավորությամբ դերբայական ձևերը, որոնք հնագույն ձևեր են համարվել և գործածվել են ածականի կամ գոյականի իմաստով։ Ի տարբերություն գրաբարի միջին հայերենում **–իչ** վերջավորությամբ ներկա (ենթակայական) դերբայի նոր կազմություններ չեն հանդիպում, այնինչ գրաբարի համեմատությամբ լայն տարածում են ստանում **–ող** //օղ<աւղ վերջավորությամբ դերբայական ձևերը[2]։ Նշենք, որ մեր ուսումնասիրած երկում հավասարապես արձանագրված են ներկա դերբայի **–ող** //**օղ<աւղ** և **–իչ** վերջավորություններով ձևերը։

Գրաբարի նման այս վերջավորություններն ավելանում են և՛ ներկայի, և կատարյալի հիմքին։

Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված են ներկա դերբայի ձևեր, որոնք հիմնականում կազմված են է լծորդության պարզ և ածանցավոր բայերից։ Ներկայացնենք դրանցից մի քանիսը՝ վերծանող (28), պատերազմող (232), նորոգող (346), գործող (348), հալածիչ (21), լուսաւորիչ (14), զարդարիչ (80) յարուցիչք (28), մեկնիչք (27)։ Արձանագրված են նաև ա լծորդության բայեր, որոնք կազմությամբ հիմնականում սոսկածանցավոր են։ Օրինակներ՝ զընդդիմացողսն (39), զշնաձողսն (306), ուրացողն (18), զիմացողն (335)։ Ինչպես երևում է, նշված բայերի ներկա դերբայի ձևերը կազմված են կատարյալի հիմքից **–ան**/~**աց** փոփոխությամբ։ Կան նաև օրինակներ, որոնցում ներկա դերբայի վերջավորությունն ավելացել է հենց բայարմատին։ Այսպես՝ առողն (124), մտողի 385), ելողի (385), դիպող (314), զտեսողսն (98)։

Հետաքրքիր է այն, որ մեր ուսումնասիրած երկում պատճառական ածանցով բայերը ներկա դերբայի ձևեր են կազմել **–իչ** վերջավորությամբ։

---

[2] Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 319։

Այսպես՝ զօրացուցիչ (344), իմաստնացուցիչ (344), կենդանացուցիչ (344), մոլորեցուցիչ (376), զարմացուցիչ (61)։

Ուշագրավ է նաև այն, որ Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված են նույն բայի ներկա դերբայի և –իչ, և –ող վերջավորություններով օրինակներ։ Այսպես՝ թարգմանիչք (26), թարգմանողք (27), սիրիչք (27), սիրողիդ (122), ասողս (69), ասացողս (170)։

Եվ գրաբարում, և միջին հայերենում ներկա դերբայը հոլովվում է, գրաբարում ենթարկվում է Ի–Ա խառն արտաքին, իսկ միջին հայերենում Ի արտաքին հոլովման, նախադասության մեջ կատարում է շարահյուսական տարբեր պաշտոններ։

Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված են ներկա դերբայի՝ թե եզակի, թե հոգնակի թվով հոլովված օրինակներ։ Ընդ որում՝ դրանք կազմված են գրաբարի քերականական օրինաչափություններով. ենթարկվում են Ի–Ա խառն արտաքին հոլովման։ Ներկայացնենք բնագրային մի քանի օրինակ։

Եւ եգիտ զնա առաւել ևս այնմ **փափագող**... (25)։ Եւ կանգնեալ զոհանամբ զաստուծոյ, **հարկանողի** և **բժշկողի** ձեռին նորա՝ տալով օրհնութիւն յաւիտեանս (297)։ Եւ յաղթեաց երիւք փորձութեամբքն յաղթողին մարդկան(126)։ Եւ սաստիկ **կատարողք** են հրամանաց իշխանին իւրեանց (227)։ Զոր գուշակեաց այրն աստուծոյ սուրբն Ներսէս վասն ազգին **նեղողաց** և աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէ, որ թաթարն կոչի (9)։ Ոչ ոմն մեռեալ, և ոմն կենդանի ըստ **բաժանողացն**, այլ մի և նոյն անձնատրութիւնն (128)։ Զամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ՝ զարմացուցանէր զամենայն **տեսողսն** և **զլսողսն** (268)։

Անցյալ դերբայը գրաբարում կազմվում է **–եալ** վերջավորությամբ, որն ավելանում է կատարյալի հիմքին։ Այդ վերջավորությունը միջին հայերենին հատուկ **եա>ե** հնչյունափոխությամբ վերածվել է **–ել** վերջավորության, որին զուգահեռ **լ>ր** ձայնորդների անցումով ձևավորվել է **–եր** վերջավորությունը։ Վերը նշված երկու վերջավորություններով միջին հայերենում ձևավորվում է վաղակատար դերբայը, որի **–ել** և **–եր** վերջավորություններով ձևերը զուգահեռաբար գործածվել են միջնադարյան հեղինակների երկերում, սակայն մեր ուսումնասիրած երկում վաղակատար դերբայի օրինակներ արձանագրված չեն։ Այստեղ ավելի գործածն են գրաբարյան անցյալ դերբայի ձևերը։ Գրաբարում անցյալ դերբայը հոլովվում է, ենթարկվում է **Ո** արտաքին հոլովման։ Ներկայացնենք մի քանի օրինակ մեր ուսումնասիրած երկից։ Արարեալ (3), ասացեալ (6), կոչեցեալ (7), բարձրացեալ(9), բոբբոքեալք (27), հեղգացելոց (27), մարդացեալ (334),

վերագրելոցդ (132)։ Ինչպես օրինակներն են ցույց տալիս, անցյալ դերբայը գործածվում է նաև հոգևակի թվի հոլովաձևերով։

Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում մեծ թիվ են կազմում նաև անցյալ դերբայի պատճառական բայերից կազմված ձևերը, ինչպես՝ յարուցեալ (82), սովորեցուցեալ (94), դարձուցեալ (104), խոնարհեցուցեալ (114), առանձնացուցեալ (184)։

Անցյալ դերբայը նախադասության մեջ կատարում է շարահյուսական տարբեր պաշտոններ։ Ներկայացնենք բնագրային մի քանի օրինակ։

Իսկ **մնացեալքն** իբրն զանտերուչս **անկուշեալ** կիցս ընկենուին. **տիրեալ** յունաց ամս քսան և մի (92)։ Եւ իբրն էհաւ ժամն **ժամադրեալ**, **բացեալ** զդուռն քաղաքին, **տեսեալ** զՄորիկ առ դուրսն (47)։ Եւ **զնացեալ** Մահմետի զճանապարհս իւր յանկարծակի եմուտ ի նա ոգի պիղծ, և **անկեալ** փրփրեցաւ(57)։ Ապա **արարեալ** սէր ընդ միմեանս, խնդրեցին զդուստր Իւանէի **ի** կնութիւն (165)։ Եւ պարսից աւերեալ զաշխարհս խաղացուցանեն ի զերութիւն ի խրատու **ուրացելոյն** Կասակայ **զմնացեալ** նախարարսն և զսուրբն Յովսէփ և զընկերս նոցա տան ի կապանս արքունի (34)։ Եվ իբրն հայրն վախճանեցաւ, **առեալ** զամենայն ինչսն՝ բաշխեաց **կարօտելոց** (183)։

Բուն բայական գործածությամբ օժանդակ բայի խոնարհված ձևերի հետ կազմում է սահմանական ու ստորադասական եղանակների բաղադրյալ ժամանակային ձևեր։ Այդպիսի բազմաթիվ օրինակներ կան նաև Գանձակեցու երկում։

Օրինակներ՝ Նոյնպէս և յունացն նս **վրդովեալ էր** (92)։ Բայց սա զի մանկութենէն դպրութեամբ զրոց **վարժեալ էր**, ի նոսին և զբօսնոյր (92)։ **Սովորեցուցեալ էին** և աղանի մի սպիտակ, որ զայր խառնէր ընդ ջուրսն և վերանայր(94)։ Բազում իրս զարմանալիս և անծանօթս պատմէր նա մեզ զբաբբարոս ազգացն, զոր **տեսեալ էր** ու **լուեալ** (371)։ Ապա սուլտանն և որք ընդ նմա մեծամեծքն, որ **ամրացեալ էին** ի բերդն, սկսան աղաչել զնա և զալ ի հնազանդութիւն նմա (388)։

Նշենք, որ Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում հանդիպում են նաև գրաբարի անցյալ դերբայով և լինիմ, կամ բայերով կազմված ձևեր։ Այսպես՝ Բոխեաց աղբիւր բարեհամ, և ծովն ընկենոյր ձուկն և փայտ, և փայտն առանց հրոյ ինքնին լուցանէր, և այնպէս **կերակրեալ լինէին** զինն ամիս (21)։ Մինչդեռ զետեղեալ յապահովս **նստեալ կայր** զօրն թաթար ընդ դաշտս ամենայն Հայոց և Աղուանից, զայր դեսպանս ի Ղիաթադին սուլտանէն (281)։ Եւ պսակի նորուն **արժանացեալ լիցի** ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ (391)։ Եւ առաքեաց որդի նորա Աթաբէկն արս հաւատարիմս և ետ գոդանալ զնշխարս հօր իւրոյ, զի **ընկեցեալ կայր** ի ջրհոր մի ցամաք (392)։

Ապառնի դերբայը գրաբարում կազմվում է **–ոց** և **–ի** վերջավորություններով, որոնք ավելանում են դերբայական հիմքին: Միջին հայերենի խոնարհման համակարգում ապառնի դերբայի կազմության այդ ձևերը տարածված չեն[3]: Մեր ուսումնասիրած երկում **–ոց** վերջավորությամբ ապառնի դերբայի գործածության 7 օրինակ կա: Հետաքրքիրն այն է, որ այդ օրինակներից հինգում կազմվել է գալ բայի ապառնու ձևը: Դարձեալ **կանգնելոց** է աստուած գթագատրութիւնն Արշակունեաց... (33): Զի նչ օգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Կոստանդեայ և Եռինեայ, մօր նորա, տեսանելոց է արեգակն զիս (76): **Գալոց** է մերով մարմնովս որով համբարձաւ (129): Յօժարեցաք մեք յիշատակ թողուլ յազգս **որ գալոց են** (271):

Գանձակեցու երկում վկայված են նաև **–ի** վերջավորությամբ ապառնի դերբայի մի քանի օրինակներ, որոնցում հանդես գալով եմ օժանդակ բայի երրորդ դեմքի հետ՝ գործածվում է որպես միադիմի բայ և արտահայտում անհրաժեշտաբար կատարելիք գործողություն: Որպէս և արեանն Քրիստոսի նիւթ զինին, յորոց և իցէ գունոց **ընդունելի է** (135): Այս արդարադատին աստուծոյ **է զիտելի** ...(148): Այլ զոր գիրք աստուածաշունչ ասթէ եկեղեցւոյ, զոր **սկսանելի է**... (339):

Միջին հայերենի դերբայական համակարգում առանձնացվում է նաև հարակատար դերբայը: Իմաստային առումով այն ցույց է տալիս կատարված, ավարտված գործողություն, բայց ի տարբերություն վաղակատարի արտահայտում է այդ ավարտված գործողության հետևանքը իբրև հարատևող արդյունք[4]: Հարակատար դերբայը կազմվում է –ած մասնիկով, որը ավելանում է ներկայի կամ կատարյալի հիմքին[5]:

Գրաբարում նս **–ած** մասնիկով ձևեր գործածվել են, սակայն դրանք չեն զիտակցվել իբրև բայ, արժեորվել են որպես գոյական և ածական: Միջին հայերենում նս լայն տարածում ունի հարակատար դերբայի գոյականական կիրառությունը, որը հաճախ հանդիպում է հոլովված տարբերակով:

Գրաբարում գոյական համարվող **–ած** վերջավորությամբ ձևերի բազմաթիվ օրինակներ են վկայված նաև Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Գրեաց և յուսաւոր **իմացուածս** վասն խորհրդական սրբասացութեանս... (113): Եւ նա աւարեալ էր ի նոցանէ, և այրեալ **շինուածքն** որ ի նմա, և անդ դադարեցաք (252): Սկսան մտանել քաղաքն և կոտորել զարս և զկանայս աւար առեալ զինչս և **զստացուածս** նոցա (253): Տան զաշխարհն

---

[3] Հմմտ. Ա. Աբրահամյան. Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 139:

[4] Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 173:

[5] Տե՛ս Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 263:

իւր ի ձեռս նորա այլ նս յաւելուածով... (269): Յաճախեաց տրտմականն մասն ի հարուածս գաւազանի ցաստանն աստուծոյ... (296):

Մեր ուսումնասիրած երկում կա հարակատար դերբայի օժանդակ բայի խոնարհված ձևի հետ գործածության միայն մեկ օրինակ: Կարի յոյժ աջողած է այրդ և շնորհաւոր (265):

Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում գործածված են –ած վերջավորությամբ հարակատար դերբայի բազմաթիվ օրինակներ, և դրանց մեծագույն մասը կատարում է որոշչի պաշտոն: Ներկայացնենք այդ օրինակներից մի քանիսը:

Սկսան շինել և այլ եկեղեցի մի հինգ խորանօք, կոփածոյ և տաշած վիմօք (222): Եւ մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր սնուցած և փառատրած Գրիգոր անուն, զոր Տոյայն կոչէին (222): ... Զայր մի, որում անուն էր Չարմաղուն, այր խորագէտ և իմաստուն, և յաջողած ի գործս պատերազմի, պատուէր տուեալ նոցա աւերել, քանդել զամենայն աշխարհս (233):

Ինչպես երևում է, վերը նշված օրինակներում որոշիչների մեծ մասը գործածված են նախադաս:

Միջին հայերենի բայական համակարգում առանձնացվում է նաև ժխտական դերբայը, բայց մեր ուսումնասիրած երկում այդ դերբայով օրինակներ վկայված չեն:

Ուսումնասիրելով բայի անղեմ ձևերը Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում, ծանոթանալով դրանց դրսևորած իմաստներին, կազմությանն ու կիրառական առանձնահատկություններին պարզ դարձավ, որ 13–րդ դարի պատմիչն իր աշխատանքում ներկայացրել է և գրաբարյան, և միջինհայերենյան ձևեր, բերականական օրինաչափություններ: Սակայն հարկ ենք համարում արձանագրել, որ դրանց մեջ մեծ թիվ են կազմում գրաբարի բայական համակարգին բնորոշ առանձնահատկությունները:

"The History of the Armenians" written by the outstanding historian of the 13th century Kirakos Gandzaketsi has an exceptional value and significance not only for introducing the different aspects of the social life of those days, but also from the linguistic point.

Relying on the data provided by the above mentioned work, the participles of the Middle Armenian, their meanings, structure and the specifications of their usage are introduced in this article.

Studying the indefinite forms of the verb in "The History of the Armenians" by Kirakos Gandzakets, getting acquainted with the meanings expressed by them, their structure and usage specification, it became clear that in this work the 13th century historian introduced both middle Armenian and Old Armenian structures and grammar principals. However, it's worth mentioning that the specifications of the verb system of the Old Armenian form a great number among them.